ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-100/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 22.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.09.2016թ. ներկայացրած բողոքով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ մասնակցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների ձեռքբերման «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6»

ծածկագրով բանակցային ընթացակարգին և գնահատող հանձնաժողովի որոշմամբ զբաղեցրել է երկրորդ տեղ, իսկ առաջին տեղ զբաղեցրել է Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն:

Ընկերությունը գրությունով գնահատող հանձնաժողովից պահանջել է Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի, գնային առաջարկի և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացրած պահանջված փաստաթղթերի պատճենները, «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն պարզել է, որ հրավերով պահանջվող՝ որպես նախկինում կատարած պայմանագիր, Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած՝ որպես ենթակապալառու «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ կնքած «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» աշխատանքների պայմանագիրը 79081760 դրամ արժեքով, չի համապատասխանում իրականությանը:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության Հայաստանի Հանրապետության գնումների համակարգում տեղադրված է ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» աշխատանքների պայմանագիրը կնքելու մասին հաշվետվությունը, որտեղ նշված է, որ պատվիրատուն «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ կնքել է 75600000 դրամի պայմանագիր: Վերոհիշյալից պարզ է դառնում, որ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն չունենալով հրավերով պահանջվող նախկինում կատարած համանման պայմանագրեր՝ որպես ենթակապալառու «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ կնքած «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» աշխատանքների պայմանագրի արժեքը, 75600000 դրամի փոխարեն ներկայացրել է 79.081.760 դրամ:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է հայտի գնահատման 31-րդ կետը, ինչպես նաև ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ կառավարության թիվ 168 որոշման 65-րդ կետին:

Ընկերությունը նշել է նաև, որ ըստ օրենքով սահմանված կարգի, ենթակապալառուն իրավունք չունի կատարելու պայմանագրի 25 տոկոսից ավելին:

«Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝

- Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը

- Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը
- Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը
- Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը
- Մերժել Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը:

Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովը մերժել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը, հիմնվելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարցման պատասխանին, այն մասին, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, որը չի համապատասխանում իրականությանը: Ընկերությունը խնդրել է կրկին հարցում իրականացնել համապատասխան մարմնին, և դրական պատասխանի դեպքում դադարեցնել գնահատող հանձնաժողովի «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը հարկ է համարել նշել նաև, որ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից հրավերի 5-րդ հավելվածով պահանջվող ներկայացրած ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Արծվանիստի միջնակարգ դպրոց կրթական օբյեկտի համաձայնագիր 5 պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է մինչև 30.08.2013թ., սակայն Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն աշխատանքները ավարտել է 23.10.2013թ.-ին՝ պայմանագրով սահմանված ժամկետը խախտելով մոտ երկու ամսով:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ Ընկերությունը 10.10.2016թ. թիվ 09/8414-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին հայտնել է, որ Ընկերությունը գնահատող հանձնաժողովից պահանջել է վերոնշյալ ենթակապալի պայմանագիրը և պայմանագրի կատարումը հիմնավորող ապացույցները, որոնց ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ հանձնաժողովը, որպես պայմանագրի կատարումը հիմնավորող ապացույց հիմք է ընդունել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի տնօրենի կողմից, առանց ամիս ամսաթվի նշման տրված տեղեկանքը, ընդ որում տեղեկանքում խոսք է գնում ոչ թե 2015 թվականի սեպտեմբերի 19-ի շինարարական ենթակապալի պայմանագրի, այլ 2015 թվականի նոյեմբերի 19-ի շինարարական կապալի պայմանագրի մասին:

Ավելին, Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ տեղեկանքը (առավել ևս առանց ամիս ամսաթվի և սխալ տեղեկությամբ) դիտեր որպես պայմանագրի կատարումը հաստատող իրավական հիմք, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ շինարարական կապալի պայմանագրի կատարման

վերաբերյալ կազմվում է հանձնման ընդունման ակտ, որն էլ գնահատող հանձնաժողովը պետք է ուսումնասիրեր և գնահատեր:

2015 թվականի սեպտեմբերի 19-ի ենթակապալի պայմանագրով «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին է հանձնարարել Արմավիրի մարզպետարանի կողմից հայտարարված մրցույթով իր կողմից շահած աշխատանքների կատարումը: Ընդ որում, տվյալ մրցույթի շրջանակներում «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի պայմանագրի գինը կազմում է 75.600.000 դրամ, մինչդեռ վերջինս Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հետ 19.09.2016 թվականի ենթակապալի պայմանագրով նույն աշխատանքների համար պարտավորվել է վճարել շուրջ չորս միլիոն դրամով ավել գումար՝ 79.081.760 դրամ:

Ընկերությանը համար տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ կազմակերպությունը պայմանագրով մեկ այլ կազմակերպության ցանկանում է վճարել ավել գումար, քան այն, ինչ վերջինս պետք է ստանար պատվիրատուից՝ տվյալ աշխատանքների կատարման համար:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 35-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է, որ կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը: Եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները:

Ըստ Ընկերության՝ վերը նշված իրավական ակտի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման աշխատանքների կատարման համար հայտարարված մրցույթին մասնակցելիս, պետք է հայտով ներկայացներ նաև ենթակապալի պայմանագիրը, եթե այդպիսին գոյություն է ունեցել:

Ընկերությունը հայտնել է, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի և Արմավիրի մարզպետարանի միջև կնքված պայմանագրի, ինչպես նաև «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի և Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի միջև կնքված ենթակապալի պայմանագրերին կից ծավալաթերթ-նախահաշիվների համեմատությամբ ի հայտ են գալիս անհամապատասխանություններ, ընդ որում, Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից կատարվելիք աշխատանքների տեսակը և

ծավալը գերազանցում է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից Արմավիրի մարզպետարանի հետ կնքված պայմանագրով կատարվելիք աշխատանքների ծավալին:

Ընկերությունը համոզմունք է հայտնել, որ վերոնշվածը խոսում է տվյալ ենթակապալի պայմանագրի շինծու լինելու մասին և խնդրել է ՀՀ Արմավիրի մարզպետարան կատարել հարցում, այն մասին, թե արդյո՞ք «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն տվյալ մրցույթի ընթացքում հայտով ենթակապալի պայմանագիր ներկայացրել է, թե ոչ, ինչպես նաև պահանջել Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման աշխատանքների հանձնման-ընդունման ակտերը:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.09.2016թ. թիվ ՄՔ/1-270-16 գրություն է ներկայացրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին, որով հայտնել է, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն բողոքով պնդում է, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով գնման գործընթացի հաղթող մասնակից ճանաչված Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ կնքած «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» աշխատանքների համանման (նմանատիպ) պայմանագիրը չի համապատասխանում իրականությանը:

Պատվիրատուն նշել է, որ վերոհիշյալ պայմանագիրը կնքված է պատվիրատուի և կապալառուի փոխադարձ համաձայնությամբ (պայմանագրում առկա են բոլոր վավերապայմանները) և որպես նմանատիպ աշխատանք համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին (հրավերով որպես նմանատիպ աշխատանք է սահմանվել բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների շինարարական աշխատանքների, այդ թվում՝ նորի կառուցում և/կամ վերակառուցման) նախկինում կատարած պայմանագրերը:

Համաձայն Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հանձնման-ընդունման արձանագրությունների՝ աշխատանքները կատարված են պատշաճ որակով և պայմանագրով սահմանված ժամկետներում:

Պատվիրատուն գտնում է, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով գնման գործընթացով ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն նշել է նաև, որ ՀՀ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացուցիչն էլեկտրոնային տարբերակով «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով գնման գործընթացի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերն ամբողջությամբ և հրավերով սահմանված որակավորման պահանջներին Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի համապատասխանությունը հիմնավորվող բոլոր փաստաթղթերը 27.09.2016թ. ներկայացրել է բողոքը քննող հանձնաժողովի քարտուղարին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Արագածոտնի մարզի ք. Քուչակի մշակույթի տան աշխատանքների ավարտը պայմանագրի նախագծով սահմանված է 10.12.2016թ., ինչպես նաև նկատի ունենալով ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղում ձմռանը շինարարական աշխատանքների կատարման դժվարությունները, Պատվիրատուն խնդրել է հնարավորության սահմաններում, արագացնել բողոքի քննարկման գործընթացը և խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

<u>3. Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.10.2016թ. թիվ 09/8366-16 գրություն է ներկայացրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին, որով հայտնել է, որ 30.08.2016թ. Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն մասնակցել է ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ համայնքի մշակույթի տան աշխատանքների ավարտման համար հայտարարված գնման մրցույթին և համաձայն 13.09.2016թ. հանձնաժողովի նիստի N 5 արձանագրության 3-րդ կետի՝ ճանաչվել է հաղթող: Մրցույթին մասնակցել է նաև «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը նշել է, որ հաղթող ճանաչվելուց հետո ընկերության հետ պետք է կնքվեր համապատասխան պայմանագիր, սակայն, մրցույթի մասնակից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիման վրա, առկախվել է ընկերության հետ պայմանագրի կնքումը, որի արդյունքում որևէ աշխատանքներ չեն կատարվում:

Ընկերությունը գտնում է, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն պետք է ներառված լիներ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հետ, հայտարարված մրցույթների արդյունքում, 04.12.2013թ. և 19.12.2014թ. կնքվել են «Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղի դպրոցի վերակառուցման աշխատանքների» (ծածկագիր՝ ԲԸՀԱՇՁԲ-13/3) և «Արագածոտնի մարզ, գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների կատարման» (ծածկագիր՝ ԲԸՀԱՇՁԲ-14/8-1) վերաբերյալ պայմանագրեր և դրանք պատվիրատուի կողմից լուծվել են 24.12.2015թ. և 21.03.2016թ.:

Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն գտնում է նաև, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն նպատակ ունի իր բողոքների արդյունքով վիժեցնել Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հետ պայմանագրի կնքումը, ձեռքբերել այդ աշխատանքների կատարման իրավունքը, որի արդյունքում հնարավարություն կունենա մարել նախորդ երկու պայմանագրերի հիման վրա պետբյուջեից ստացած մի քանի տասնյակ միլիոն դրամի հասնող գումարները: Ավելին, այս նպատակով ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակի մշակույթի տան աշխատանքների ավարտման համար հայտարարված գնման մրցույթին մասնակցել է նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, որը «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հետ ունի փոխկապակցվածություն, ավելին՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն ևս պետք է ներառված լիներ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ այս ընկերության հետ 19.12.2014 թվականին կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակի մշակույթի տան աշխատանքների ավարտման համար պայմանագիր (ծածկագիր՝ ԲԸՀԱՇՁԲ-14/8-1), սակայն 02.03.2016 թվականին այս պայմանագիրը ևս լուծվել է:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Ընկերությունը խնդրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին միջամտել առկա խնդրին լուծմանը:

4. ԳԲԽ-100/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-100/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն, որոնք ներկայացրել են գնային առաջարկները՝ համապատասխանաբար 303,727,554 և 311,046,288 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. օգոստոսի 30-ին ժամը 11:00 կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և 31.08.2016թ. ծանուցվել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընկերությունը, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի, որպես նախկինում կատարած պայմանագիր ներկայացրել է 14.05.2009թ. N ՄԲԱՇՁԲ-09/14-4 և 29.05.2009թ. N ԱՇՁԲ-09/101-1 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման, ինչպես նաև 19.09.2015թ. «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական ենթակապալի պայմանագրերը:

5. Ընկերությունը, որպես 19.09.2015թ. շինարարական ենթակապալի պայմանագրի պատշաճ կատարման հավաստում, ներկայացրել է «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից տրված

պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող տեղեկանք: Համաձայն նշված տեղեկանքի՝ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ ***19.11.2015թ.*** կնքված «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» ***շինարարական կապալի*** պայմանագիրը իրականացրել է 79 081 760 ՀՀ դրամ արժողությամբ: Վերոնշյալ պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ավարտվել են ամբողջությամբ և ժամանակին, ինչպես նաև կատարվել են պատշաճ որակով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 13-ին ժամը 12:30 կայացած նիստի թիվ 5 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

7. Ի պատասխան Պատվիրատուի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 286,355,643 ՀՀ դրամ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 13-ին ժամը 12:30 կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (286,355,643 ՀՀ դրամ) պակաս է ներկայացված գնային առաջարկից (311,046,288 ՀՀ դրամ) և հիմք ընդունելով արձանագրության 1.1 կետը, ինչպես նաև հրավերի 7.2.1 կետի պահանջը, երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

9. ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 22.09.2016թ. բողոքով ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով որոշել է Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 22.09.2016թ. բողոքով ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով Ընթացակարգի գնահատողի

հպանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

5. <u>ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի՝ 10.10.2016թ. թիվ 09/8414-16 ներկայացված գրությունը, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 30.09.2016թ. թիվ ՄՔ/1-270-16 և Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի 07.10.2016թ. թիվ 09/8366-16 գրությունները, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն, որից գնահատող հանձնաժողովը պահանջել է ներկայացնել Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)՝ 751 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***<u>կապալառուի կողմից աշխատանքի արդյունքի հանձնումը և պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով:</u>*** Ակտն ստորագրելուց կողմերից մեկի հրաժարվելու դեպքում ակտում նշվում է այդ մասին, և ակտն ստորագրում է մյուս կողմը:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)

- 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով

ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

- 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, ***<u>իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:</u>***

Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն, որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք հաշվետու տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիր, ներկայացրել է 14.05.2009թ. N ՄԲԱՇՁԲ-09/14-4 և 29.05.2009թ. N ԱՇՁԲ-09/101-1 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման, ինչպես նաև 19.09.2015թ. «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական ենթակապալի պայմանագրերը:

- Ընկերությունը՝ որպես ***<u>19.09.2015թ. «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական ենթակապալի պայմանագրի</u>*** պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթ, ներկայացրել է

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանք, համաձայն որի՝ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ ***19.11.2015թ. կնքված «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական կապալի պայմանագիրը*** իրականացրել է 79 081 760 ՀՀ դրամ արժողությամբ: Վերոնշյալ պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ավարտվել են ամբողջությամբ և ժամանակին, ինչպես նաև կատարվել են պատշաճ որակով:

19.09.2015թ. «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական ենթակապալի պայմանագրի և ներկայացված տեղեկանքի ուսումնասիրությունից երևում է, որ նշված տեղեկանքը չի կարող դիտվել որպես 19.09.2015թ. շինարարական ենթակապալի պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ապացույց: Մասնավորապես, Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած շինարարական ենթակապալի պայմանագիրը ամսագրված է ***19 սեպտեմբերի 2015թ.***, մինչդեռ ներկայացված տեղեկանքում նշված է Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի միջև ***19 նոյեմբերի 2015թ.*** կնքված «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական կապալի պայմանագիր: Ավելին, Ընկերությունը գնահատող հանձնաժողովին ներկայացրել է շինարարական ***ենթակապալի*** պայմանագիր, սակայն տեղեկանքում նշված է շինարարական ***կապալի*** պայմանագիր: Այսինքն, տեղեկանքում խոսք է գնում ոչ թե ***2015 թվականի սեպտեմբերի 19-ի շինարարական ենթակապալի*** պայմանագրի, ***այլ 2015 թվականի նոյեմբերի 19-ի շինարարական կապալի*** պայմանագրի պատշաճ կատարման մասին:

Այսպիսով, տրված տեղեկանքում նշված է այլ տեսակի (ոչ թե կապալի, այլ ենթակապալի) և այլ ամսաթվով (ոչ թե 19 սեպտեմբերի 2015թ., այլ 19 նոյեմբերի 2015թ.) պայմանագիր, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը տարբերակում է պայմանագրի այդ երկու տեսակները:

Օրենսգրքի՝

- 704 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենքից կամ կապալի պայմանագրից չի բխում կապալի պայմանագրում նշված աշխատանքն անձամբ կատարելու՝ կապալառուի պարտականությունը, ապա նա իրավունք ունի իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ անձանց (ենթակապալառուների): Այդ դեպքում կապալառուն հանդես է գալիս որպես գլխավոր կապալառու:

- 704 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գլխավոր կապալառուն պատասխանատվություն է կրում պատվիրատուի առջև ենթակապալառուի կողմից պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, իսկ ենթակապալառուի առջև՝ կապալի պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ պատվիրատուի կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 738 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալառուն, շինարարական կապալի պայմանագրով, պարտավորվում է պայմանագրում սահմանված ժամկետում պատվիրատուի առաջադրանքով կառուցել որոշակի օբյեկտ կամ կատարել շինարարական այլ աշխատանքներ, իսկ պատվիրատուն պարտավորվում է կապալառուի համար ստեղծել աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ պայմաններ, ընդունել դրա արդյունքը և վճարել պայմանավորված գինը:

Բացի այդ, ըստ Օրենսգրքի՝ կապալառուի կողմից աշխատանքի արդյունքի հանձնումը և ՝պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով, այն ինչ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից՝ որպես 19.09.2015թ. «ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան վերակառուցման» շինարարական ենթակապալի պայմանագրի պատշաճ կատարման հավաստում ներկայացվել է պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող տեղեկանք, որն էլ իր հերթին, ըստ էության, վերաբերվում է այլ պայմանագրի:

Այսպիսով, Պատվիրատուն, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող նման բովանդակությամբ տեղեկանքի պայմաններում՝ բավարար է գնահատել «Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը և 2016թ. սեպտեմբերի 13-ի որոշմամբ «Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, ինչի հետևանքով խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ բողոքը այս մասերով ենթակա է բավարարման և առաջարկում ենք դադարեցնել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 13.09.2016թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված «Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագրի կնքելու մասին որոշումները:

Ինչ վերաբերում է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ «Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու և առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումները դադարեցնելու պահանջներին, ապա հայտնում ենք, որ «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Այս մասերով, Պատվիրատուի կողմից հայտերի գնահատման 1-ին փուլում (մինչև որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատումը) պահպանելով գնումների մասին օրենսդրության պահանջները, ուստի, Պատվիրատուն, 30.08.2016թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ բավարար է գնահատել «Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի նախապատվություն տալու սկզունքով, առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչել «Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ն:

Այսպիսով, գտնում ենք, որ բողոքը այս մասերով ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը մերժելու պահանջին, ապա հայտնում ենք, որ Ընկերության այս պահանջը ենթակա է մերժման, քանի որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման որոշում կայացնելու իրավունք չունի, ուստի գտնում ենք, որ բողոքը այս մասով նույնպես ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջին, ապա հայտնում ենք, որ ի պատասխան «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հարցման՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության օրվա դրությամբ չի ներկայացվել տեղեկատվություն այն մասին, թե որքան են կազմում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը: Միևնույն ժամանակ, «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրել է հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների ռեզիդենտների շահութահարկի հաշվարկներ,

համաձայն որոնց՝ Ընկերության հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող (2013թ.՝ 59,578,243 ՀՀ դրամ, 2014թ.՝ 41,753,640 ՀՀ դրամ, 2015թ.՝ 225,023,760 ՀՀ դրամ) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 326,355,643 ՀՀ դրամ: Հետևաբար, «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ***(326,355,643 ՀՀ դրամ)*** պակաս չէ ներկայացված գնային առաջարկից ***(311,046,288 ՀՀ դրամ)***, ուստի գտնում ենք, որ բողոքը այս մասով ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝

1. «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի. դադարեցնել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 13.09.2016թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները:
2. «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/6» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 30.08.2016թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ին առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու և Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ-ի հայտը մերժելու պահանջների մասերով բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Վերապատրաստումների և խորհրդատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Կատվալյան